

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՈՐՈՇՈՒՄ

\_\_\_\_\_2018 ԹՎԱԿԱՆ N - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 13-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինության՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի Խանջյան 63 հասցեում գտնվող շենք-շինություններից 14199306 դրամ կադաստրային արժեքով և 825 քառ.մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքը (այսուհետ՝ անշարժ գույք) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ենթակայության «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ հիմք ընդունելով անշարժ գույքի չափագրման արդյունքում ստացված տվյալները՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել 2017 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 120/0017 պայմանագրում սույն որոշումից բխող փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ դրանում սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն ենթակա են իրականացման «Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվին,

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում «Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն ենթակա են իրականացման «Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյան

# ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

### ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### **ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության կառավարության «Անշարժ գույք հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության բարելավման անհրաժեշտությունից:

«Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է 1994 թվականի մարտի 4-ին և վարձակալական հիմունքներով գործում է Արարատի մարզի Արարատ քաղաքի Կոմիտասի 12 հասցեում: Վարձակալությամբ զբաղեցված տարածքի չափը կազմում է 397.76 քառ. մետր, իսկ պայմանագրով սահմանված վարձավճարը տարեկան կազմում է 3000000 դրամ: Վերը նշված տարածքը չի բավականացնում քոլեջին՝ նոր մասնագիտություններ ներդնելու, ժամանակակից պահանջներին համապատասխան լսարաններ և լաբորատորիաներ ձևավորելու համար:

Արարատ քաղաքում գործող երկու քոլեջների՝ Արարատի պետական բժշկական քոլեջի և Արարատի պետական քոլեջի միավորումն էլ գրեթե անհնար է, քանի որ Արարատի պետական քոլեջի շենքային պայմանները հնարավորություն չեն ընձեռի ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպել, քանի որ Արարատի պետական բժշկական քոլեջի ունի 31 աշխատակից և 130 ուսանող, շուրջ 25 ուսանող էլ կընդունվեն այս տարի, իսկ Արարատի պետական քոլեջում սովորում է շուրջ 246 ուսանող և շուրջ 150 ուսանող էլ կընդունվի այս տարի:

Արարատի մարզի Արարատ քաղաքի Խանջյան 63 հասցեում գտնվող «ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված շենքից 825 քառ.մետր ընդհանուր մակերեսով տարածքը «Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետև՝ քոլեջ) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու դեպքում քոլեջը կկարողանա ապահովել ուսումնական բնականոն գործընթացը և տնտեսելով ամսական 225000 դրամ վարձավճար՝ դրանք օգտագործել լսարանների ու լաբորատորիաների ձևավորման համար:

Նշված հարցի առնչությամբ 09.04.2018թ. հ.1/6/1-2/2064-18 գրությամբ ստացվել է նաև ՀՀ Արարատի մարզպետի համաձայնությունը՝ «ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված երկհարկանի շենքից 825 քառ.մետր ընդհանուր մակերեսով տարածքն անհատույց օգտագործման նպատակով «Արարատի պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու վերաբերյալ:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին**

«Անշարժ գույք հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունում այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնի:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին**

«Անշարժ գույք հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնի:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման համար հիմք հանդիսացող իրավական ակտերի մասին**

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը,

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
 ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ  
 ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՅՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
<p>Տարածքային զարգացման և կառավարման նախարարություն                      27.06.2018թ.                      հ.01/15.2/4231-18</p>	<p>«Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսել, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը պետք է իրականացվեն «Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջոցների հաշվին»:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Որոշման նախագծում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:</p>
<p>Ֆինանսների նախարարություն                      02.07.2018թ.                      հ.01/9-5/12028-18</p>	<p>Նախագծով սահմանել, թե գույքի չափագրման, առանձնացման և որպես առանձին գույքային միավոր գրանցելու աշխատանքներն ում միջոցներով են իրականացվելու:</p>	<p>Ընդունվել է և լրամշակվել է. չափագրման, առանձնացման աշխատանքերը կատարված են և որպես առանձին գույքային միավոր գրանցելու աշխատանքներն իրականացվելու են «Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջոցների հաշվին», որը ներառված է որոշման նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետում:</p>	<p>Լրամշակվել է</p>

<p>Պետական գույքի կառավարման կոմիտե 16.07.2018թ. հ.01/22.2/4266-18</p>	<p>1. Որոշման նախագծի վերնագրում «ամրացնելու» բառից առաջ լրացնել «անհատույց օգտագործման իրավունքով» բառերը</p> <p>2. Որոշման նախագծի ամբողջ տեքստում բացել «ՀՀ» հապավումը»</p> <p>3. Որոշման նախագծի 1-ին կետում՝ «Արարատի» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը, «Արարատի մարզի ենթակայության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ենթակայության» բառերով, «(այսուհետ՝ գույք)» բառերը փոխարինել «(այսուհետ՝ անշարժ գույք)» բառերով, իսկ «Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվող տարածքի մակերեսը նշել չափագրման արդյունքում ստացված մակերեսը</p> <p>4. Որոշման նախագծի 2-րդ կետում՝ «կոմիտեի նախագահին՝» բառերից հետո լրացնել «հիմք ընդունելով չափագրման արդյունքում ստացված տվյալները.» բառերը</p> <p>5. Որոշման նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետում՝ «մեկամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով, ինչպես նաև հանել «հիմք ընդունելով գույքի չափագրման, առանձնացման և գրանցման արդյունքում ստացված տվյալները.» բառերը</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է լրացումը</p> <p>Կատարվել է</p> <p>Կատարվել են համապատասխան լրացումները</p> <p>Կատարվել է լրացումը</p> <p>Կատարվել է</p>
<p>Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 22.06.2018թ. ԱԱ/3661-18</p>	<p>Առարկություններ և առաջարկություններ չկան:</p>		